# ՀԱՆԳԻՍՏ
## ԱՐԺ. Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
## (1884—1959)



1959 թվականի մայիսի 29-ին, կարճատև հիվանդությունից հետո, վախճանվեց Ապարան գյուղի Ս. Խաչ եկեղեցու ծխատեր Հովհաննես ավագ քահանա Հովհաննիսյանը:

Հանգուցյալը ծնված էր 1884 թվականին Ապարանում: Իր նախնական կրթությունն ստանում է իր ծննդավայրի ծխական դպրոցում: Նա իբր հավատավոր ծնողքի զավակ, փոքր հասակից հատուկ ջերմեռանդությամբ և սիրով է կապվում Հայ եկեղեցու երաժշտության և ծեսերի հետ: Հոգևոր ասպարեզի հանդեպ ունեցած սերը 1921 թվականին նրան առաջնորդում է դեպի Հայ եկեղեցու սպասավորության դասը: Երևանի Ս. Սարգիս եկեղեցում Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանից նա քահանա է ձեռնադրվում և մինչև իր մահը հանդիսանում է հավատարիմ և ավանդապահ հոգևորականը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և աղնիվ ու անկաշառ հովիվը իր սիրեցյալ հոտի:

Իր բարվոք ծառայության իբր գնահատանք, հանգուցյալ Գևորգ Ջ Կաթողիկոսից ստանում է լանջախաչ կրելու իրավունք 1950 թվականին, ավագություն՝ 1951 թվականին և ծաղկյա փիլոն՝ 1953 թվականին:

Թաղման տխուր կարգը տեղի ունեցավ մայիսի 31-ին, Ապարանում, նախագահությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետի, մասնակցությամբ արժանապատիվ Տ. Հարություն քահանա Մարկոսյանի և Տ. Նշան քահանա Հանեսյանի: Մարմինը ամփոփվեց եկեղեցու բակում:

Իր նվիրված և բարի հովվին վերջին հրաժեշտ տալու համար դագաղի շուրջն էր հավաքվել ամբողջ Ապարան գյուղի և շրջանների բնակչությունը:

Հավիտենական հանգիստ իր խոնջած մարմնին: